

ԹԱԼԻՇԵՐԵՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԻ ՇՈՒՐՁ

Հոգվածում քննակվում է մի թեմա, որին քիչ է անդրադարձ կատարվել, միգուցե այն պատճառով, որ պարզապես չկա որևէ վկայություն հայ-թալիշական լեզվական կապերի մասին: Ուսումնասիրվել են մի քանի բառեր, որոնք հանդիպում են և՛ թալիշերենում, և՛ հայերենում:

Իհարկե, թալիշերենը և հայերենը երբեք անմիջական կոնտակտ չեն ունեցել (գոնե ինչքան, որ վկայում են պատմական աղբյուրները), այնուամենայնիվ, Հայկական Լեոնաշխարհում կան *Թալիշ*¹ անունով մի քանի գյուղեր (*Թալիշ*-գտնվում է ներկայիս ՀՀ Արագածոտնի մարզում, *Թալիշ* - ԼՂՀ Մարտակերտի շրջանում): Հետաքրքիրն այն է, որ ՀՀ տարածքում գտնվող բնակավայրի մասին հիշատակում է 17-րդ դարի թուրք ճանապարհորդ Էվլիա Չելեբին²: Իսկ Արցախի Թալիշը հայտնի է դեռևս Թալիշական խանության ժամանակաշրջանից: Այն, որ թալիշները ծանոթ են եղել հայերին դեռևս 5-րդ դարից, հանդիպում ենք հայ մատենագրության մեջ: 5-րդ դարում ավանդված հունարենից թարգմանված «Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու»³ երկի ուշ միջնադարում կազմված հայերեն մի խմբագրության մեջ կա հետևյալ տողերը.

«Եվ պատմեաց մնա, թէ փախստական է ի Կասբիական դրունս, մերձ յաշխարհն Թալիշ, ի գաւառն Գիլանայ»:

¹ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և Հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Ե., 1988, էջ 396:

² «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», թուրքական աղբյուրներ, հ. Գ, Էվլիա Չելեբի, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Սաֆրաստյանի, Ե., 1997, էջ 120:

³ Սիմոնյան Հ., Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացվոյ, Ե., 1989, էջ 233:

Բնագրի այս հատվածում *ի Կասթիական դրունս* (= ἐπὶ τὰς Καστιακὰς πύλας), արտահայտությանը հաջորդող *մերձ յաշխարհն թալիշ*, *ի գաւառն Գիլանայ* տողում հունական խմբագրությունում բացակայում է *թալիշ* բառը, այն հայկական խմբագրության հեղինակի կողմից է ավելացվել⁴:

Սակայն սա ավելի խոսուն փաստ է այն մասին, որ դեռևս մեր թվարկության 5-րդ դարում թալիշները հայերին ծանոթ են եղել, նույնիսկ ունեցել են որոշակի շփում և կապեր: Հակառակ դեպքում ինչպե՞ս բացատրել այն հանգամանքը, որ թարգմանիչը ամենայն ճշտությամբ իմացել է, թե որտեղ է ապրում թալիշ ժողովուրդը, որն է նրանց պատմական հայրենիքը:

Այս ամենից կարելի է ենթադրել, որ ճիշտ է, չկան որևէ պատմական փաստեր և աղբյուրներ հայ-թալիշական լեզվական շփումների մասին, բայց կան կողմնակի տվյալներ, որոնք վկայում են այն մասին, որ ժամանակին, հայերը և թալիշները ունեցել են կամ կարող էին ունենալ շփման եզրեր, հնարավոր է նաև, որ այդ շփումները եղել են, ոչ թե անմիջական, այլ միջնորդավորված հարևան ազգերի կողմից:

Հաշվի առնելով բառերի սեմանտիկ դաշտը՝ (թալ. *kutəṇ*, *kotəṇ* հմմտ. մջն.հայ. *gut'an*, քրթո. *g'ut'an* / *k'ut'an*; թալ. *lard* հմմտ. հայ. քրթո. **l(e)ard* (հմմտ. Ղարաբաղի քրթո. *la/ärt'*, Շամախի *lərt'*, և այլն) «լերդացած արյուն» (գրաբարում *leard*); թալ. *las/ lus /ləs* հմմտ. հայ. *lusan*; թալ. *parzəṇ* և քրդ. *parzon* հմմտ. հայկ. քրթո. *parzon* (լվացքի ժամանակ մաքրաջուրը, ֆիլտր, գտիչ); թալ. *pus'* հմմտ. հայկ. քրթո. *p'us'*)⁵ այդ շփումը պետք է, որ եղած լինի միայն սոցիալական պարզ մակարդակում, ոչ ավել: Այս բառերը հնարավոր է նաև, որ թալիշերենին են անցել Կովկասյան թուրքերենի կամ քրդերենի միջոցով (սա այն դեպքում, եթե ընդունում

⁴ Երեմյան Ս., Հայաստանը ըստ Աշխարհացոյցի. փոքր VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրության հիմքի վրա, Ե., 1963, էջ 58a: Հմմտ. Wolohojian Albert Mugrdich, *The Romance of Alexander the Great by Pseudo-Callisthenes* (translated from the Armenian version with an introduction), New York – London, 1969, p. 102.

⁵ Asatrian G., Borjian H., *Talish and the Talishis: The State of Resaearch, Iran and the Caucasus*, Brill, Leiden, 2005, Vol. 9/1, p. 53.

ենք, որ հայերն ու թալիշները չեն ունեցել քնդհանուր շփման եզրեր): Չի բացառվում նաև գուտ արեալային ունիվերսալիաների առկայությունը:

Այստեղ մանրամասն կանդրադառնանք նշված բառերից մասնավորապես, մեր կարծիքով, առավել հետաքրքիր և լեզվական տեսակետից արժեք ներկայացնող երեք բառի՝ *գութան*, *լերդ/լարդ*, *լուսան*: Ենթարկելով դրանք համապատասխան լեզվական քննության՝ կփորձենք պարզել՝ արդյո՞ք այս բառերը անմիջապես հայերենից են անցել թալիշերենին, միջնորդավորված փոխառություններ են, թե՞ արեալային ունիվերսալիաներ, կնշենք այն լեզվական առանձնահատկությունները, որոնց առկայությունից կամ բացակայությունից է կախված տվյալ բառի իրանական լինել կամ չլինելը:

Գութան

Թալիշերենում այն հանդիպում է հիմնականում *kūtān* ձևով, չնայած այս տարբերակի կողքին կան նաև *kutān*, *kotān* տեքով, որն հատուկ է հյուսիսային թալիշերենին:

Այս բառը լայնորեն տարածված է նաև քրդական հյուսիսային բարբառներում (կուրմանշի) *k'ōtān*, *k'ōt'ān'* լայն գութան: Հմմտ. *k'ōtān-bar* վարելահող, *k'ōt'ān-k'ēš*, *k'ōt'ān-čī*⁷ հողագործ, ինչպես նաև քրդական ցեղի անուն *k'ōt'ān-lī*:

Խնդրահարույց բառը հանդիպում ենք նաև հայկ.բրբոն՝ *gut'an*, *k'ut'an*, *k'ūt'an*, ինչպես նաև Արևելյան Անատոլիայի թյուրքական բարբառներում և Կովկասում՝ *kotan*, *kōtan*, *kōter*⁸ տեսքով:

Բառի ծագման արեալը ուսումնասիրողները համարում են Կովկասը՝ հմմտ. վրաց. *gutani*, ինգուշ. *gotanger*, չեչեն. *got'a*, ուտի. *keotan*, օս. *gut'on*, ափխազ. *kotan*, սակայն թե կոնկրետ որ լեզվից, աղբյուրը չի նշվում: Բառը հանդիպում է նաև տարածաշրջանի մյուս ոչ

⁶ Hažar, Kurdish-Persian Dictionary, Tehran, 1997, p. 624; Бакаев Ч., Язык азербайджанских курдов, М., 1965, с. 177.

⁷ Бакаев Ч., նշվ. աշխ., էջ 228:

⁸ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե., 1971, էջ 587b-588a; Абаев В., Историко-этимологический словарь осетинского языка, т. 1, М.-Л., 1958, с. 527.

կովկասյան ծագման ժողովուրդների մոտ՝ ատրպատ. թրք. *kotan*, քրդ. *kutan*, թալ. *kotari*⁹:

Ըստ Աբանի՝ բառի Կովկասյան ծագման լինելը հավաստված չէ, նա օգտագործում է «*համակովկասյան անհայտ ծագման բառ*» եզրույթը¹⁰: Միննույն ժամանակ խնդրահարույց բառը *kūṣa*, *kūtam* տարբերակով հանդիպում ենք նաև սանսկրիտում, որը Մայրհոֆերի պնդմամբ դրավիդյան ծագման բառ է¹¹:

Պարզ է, որ բառը, լինելով մշակութային-գյուղատնտեսական, պետք է տարածված լիներ շատ ժողովուրդների մոտ, հնարավոր է նաև, որ դրավիդյան և կովկասյան լեզուներում առկա բառերը ոչ մի կապ չունեն միմյանց հետ, պարզապես պատահական նմանություն է:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թալիշերենում առկա բառը, ամենայն հավանականությամբ, միջնորդավորված փոխառություն է հայերենից: Հավանաբար հայերենից այն անցել է կովկասյան թուրքերենին, իսկ կովկասյան թուրքերենից էլ՝ թալիշերենին:

Լարդ, լերդ

Բնիկ հայերեն բառ է: Աճառյանը չի տալիս հնդեվրոպական նախաձևը՝ նշելով, որ բարդ է գտնել նախաձևը¹², իսկ Ջահուկյանը նշում է, որ ամենայն հավանականությամբ, այն բխում է. հնիս. **iek-^urt-* «լարդ» (հմմտ.՝ սնսկ. *ya'krt*, հուն. *ήπαρ-ατος*, լատ. *jecur*) և **leip-* «ճարպ» **liper-* «ճարպոտ, գեր, լյարդ», (հուն. *λίπαρος* հին. վեր.գերմ. *libera* «ճարպոտ» (լյարդի անվան մակդիր), հ.իսլ *lifr* «լյարդ» հիմքերի բաղադրվմամբ¹³: Իրանականի դեպքում հին և միջին իրանական լեզվադարաշրջաններում բառը հանդիպում է բառասկզբի *y-* տառով՝ հմմտ. ավեստ. *yakarə*, պրթն. *yakar/jakar*¹⁴, իսկ նոր իրանականում արդեն *j-* տառով՝ հմմտ. քրդ. *jerk*, աֆղ. *jigar*, օս. *iger*, բել. *Jagar*, ն. պրսկ.

⁹ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 587b-588a:

¹⁰ Абаев В., նշվ. աշխ., էջ 257:

¹¹ Mayrhofer M., Etimologisches Wörterbuch des Altindoarischen, Band 1, Heidelberg, 1989, S. 384.

¹² Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. Բ, 1973, էջ 270b-271b:

¹³ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 293:

¹⁴ MacKenzi D., A Concise Pahlavi Dictionary, London, 1986, p. 48; Durkin-Meisterernst, Dictionary of Manichean Middle.Persian, Brepols, 2004, p. 206b.

*jegar*¹⁵ (այստեղ տեղի է ունեցել *j* > *y* երկրորդական զարգացում, ինչն հատուկ է իրանական լեզուներին, մասնավորապես թալիշերենին մոտ կանգնած հարավ-թաթական բարբառներին՝ հմմտ. *jou* > *yav* «զարի», *juz* > *yuz* «ընկույզ» և այլն¹⁶), սակայն թալիշերենը շեղվում է ընդհանուր հնդիրանական լեզվական կանոնից և ունենք *lerd/lard* ձևը: Պարզ է, որ բառը իրանական լեզվական օրենքներին չի ենթարկվում և ստուգաբանելի չէ, ավելի, հանձնարարելի չէ իրանական լեզվաճյուղի համար:

Բնական է, որ թալիշերենն այս բառը պետք է փոխառած լիներ հարևան որևէ լեզվից: Ուսումնասիրելով հարևան հնդեվրոպական լեզուները, կրկին պարզ է դառնում, որ միայն հայերենից է հնարավոր փախառությունը:

Լուսան

Բավականին հետաքրքիր է թալիշերենի *lus /ləs* բառը:

Տերմինը, որն արտահայտում է լուսան բառը, առկա է գրեթե բոլոր հնդեվրոպական լեզուներում, հմմտ. հուն *λύγξ*, հին վերին գերմաներեն (Althochdeutsch) *luhs*, հ.անգլ. *lox*, լիտվ. *lušis*, լատվ. *lūsis*, հայ. *lusan*, հ.սլավ. *plъcъ* և այլն: Այս բոլոր բառերն հանգում են հնիս. **leuk-*, **luk-* նախաձևին¹⁷: Ուսումնասիրողների պնդմամբ՝ կենդանու անունը, հավանաբար, առաջացել է նրա մաշկի կամ աչքերի փայլի պատճառով¹⁸:

Տարօրինակ է, սակայն, պետք է նշել, որ հնդիրանական ճյուղում կենդանու անվան հնդեվրոպական տարբերակը չի պահպանվել: Օրինակ պրս. *լուսան* բառի համար օգտագործում են արհեստածին *siyāh-guš* բառացի «սև ականջ» բառը: Կա նաև հազվադեպ օգտագործող բավականին հին *vašaq* բառը, որի ծագումն անհայտ է (< հնարավոր է

¹⁵ Horn P., Grundriss der Neupersischen Etymologie, Strasburg, 1893, S. 95.

¹⁶ Վարդանյան Ա., Խալխալի նոր ազարիական բարբառների բառապաշարի որոշ առանձնահատկությունների շուրջ, *Orientalia*, պրակ 15, Ե., 2013, էջ 43:

¹⁷ Pokorni J., Indogermanisches etymologisches Wörterbuch, Bern-München, 1959, Band, 1, S. 687.

¹⁸ Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. Բ, 303a:

հ.իրա **aus-* «վառվող, այվող» հմմտ.՝ թալ. *vaš-* «այրվող», հայ. *atrušan* «կրակատու» < հ.իր. **atur-aus-āna*¹⁹):

Այս, այսպես կոչված, «տարօրինակության» հիմնական կովան այն է, որ հնդիրանցիների տարածման արեալում կային կատվազգիների ավելի աչքի ընկնող կենդանիներ (վագր, ընծառյուծ, առյուծ), հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնդեվրոպացիների, առավել ևս հնդիրանցիների մշակույթը մեծապես ազդել է լեզվի վրա, ապա բնական է, որ այս պարագայում մոռացության պետք է մատնվեր առավել քիչ օգագործվող և քիչ վտանգավոր կենդանու բնիկ հնդեվրոպական անվանումը: Ամենայն հավանականությամբ իր դերն է խաղացել նաև հնդիրանցիների և հակտապես իրանցիների մոտ տարածված կենդանիների՝ ահուրայական և ահրիմանական բաժանումը²⁰ (լուսանը համարվել է ահրիմանական կենդանի):

Սակայն միանշանակա՞ն պնդել, թե հնդիրանական լեզուներում անհանձնահարելի է հնդեվրոպական **leuk-*, **luk-* արմատը, սխալ կլինի: Հնդիրանական ռոտացիզմի կանոնի համաձայն այս արմատի հին իրանական տարբերակն է **rauča-* «լույս», **raušna-* «լուսավոր»²¹, հմմտ.՝ ավեստ. *raočah-*, *raošən*²², հ.պրս *raučah-* «լույս, օր», միջ.պրս. *rōč* «օր», *rōšn* «լուսավոր»²³, ն.պրս. *ruz*, *roušan*, թալ. *ruž*, *rušən* / *rušin*, քրդ. *rož* (հմմտ.՝ հայ. *luyš* «լույս») և այլն:

Այսպես, թալիշերենում առկա *lus /ləs* «վայր / անտառային կատու» բառում, համաձայն իրանական լեզվական օրենքների՝ *//* և */s/* հնչյունները չեն կարող արտահայտել իրանական ձևը, շեղվում են բուն իրանական տարբերակից, հատկապես, ինչպես նշվեց վերևում, հնդիրանական լեզվական հանրույթները այս բառը չեն պահպանել:

¹⁹ Bartholomae Ch., Altiranisches Wörterbuch, Berlin, 1904, S. 1488-1491.

²⁰ Bailey H., To The Jamasp namak II, - Bulletin of the School of Oriental and African Studies (այսուհետև՝ BSOS) 6/3, (1931): p. 599; Boyce M., Some Reflections of Zurvanism, (BSOAS) 19/2, (1957), p. 315.

²¹ Bartholomae Ch., նշվ. աշխ., էջ 1488-1491:

²² Justi Fr., Handbuch der Zendsprache, Leipzig, 1864, S. 76.

²³ MacKenzi D., նշվ. աշխ. էջ 48, Durkin-Meisterernst, նշվ. աշխ., էջ 206b:

Այս դեպքում, բնական է, որ հարց է առաջանում, թե թալիշերենում որտեղից է հայտնվել բառը, որը ոչ մի կերպ ստուգաբանելի չէ իրանական և հնդիրանական կոնտեքստում: Պարզ է, որ այն պետք է փոխառություն լինի հարևան որևէ հնդեվրոպական լեզվից, որի հետ թալիշերենը պատմական ինչ-որ փուլում շփում է ունեցել (ինչու՞ հենց թալիշերենը, քանի որ մնացած իրանական լեզուներում չկա այս բառը, հետևաբար չի կարող միջնորդավորված փոխառություն լինել): Միակ լեզուն, որից թալիշերենը կարող է փոխառել խնդրահարույց բառը, կարող է հայերենը լինել, որը կարող էր պահպանվել հայ-իրանական ծայրամասին սահմանում՝ Փայտակարանում:

Հետաքրքիր է, որ թալիշական *lus*-ն արտացոլում է բավականին հին հայկական բարբառային տարբերակը (*lus*- առանց երկրորդային -*an* ածանցի, հմմտ. գրաբ. *lusan*), որը չի պահպանվել ո՛չ հին հայկական գրական ավանդության մեջ, ո՛չ միջին, ո՛չ էլ նոր: Կարևոր է նաև իմաստային, սեմանտիկ դաշտի նմանությունը, քանի որ ներկայումս հայերենի արևելյան բարբառներում այն նույնպես նշանակում է «*վայրի կատու*»:

Լիովին հնարավոր է, որ թալիշերենը այս բառը վերցրել է *ատրպատականյան մարրական բարբառներից*²⁴, որն էլ իր հերթին վաղ

²⁴ Մինչև այժմ էլ ուսումնասիրողները համակարծիք չեն Ատրպատական նահանգի բարբառներին տրվող անվանումների հարցում: Ատրպատականի տեղական իրանական բարբառներին իրանագիտական գրականության մեջ տրվում են «ատրպատականյան մարական բարբառներ» (Yarshater E., A Grammar of Southern Tati Dialects, Paris, 1969)՝ «հարավային թաթերեն, թաթերեն» (չշփոթել Արևելյան Կովկասում տարածված հարավարևմտյան իրանական նույնանուն բարբառների հետ), «ազարի» (Lecoc P., Les dialectes caspiens est les dialectes du nord-ouest de l'Iran: in Compendium Linguarum Iranicarum, Wiesbaden, 1989, p. 294-296) եզրույթը: Վ. Ռսկանյանն այս բարբառախմբի համար առաջարկում է «նոր ազարիական» անվանումը, քանի որ «նոր ազարիական» գիտաբառը նույնական է «թաթական» անվան հետ, սակայն առավել տրամաբանական է և ունի պատմական հենք» (Ռսկանյան Վ., «Նոր Ազարիական Լեզուների Քալասուրի Բարբառախումբը», Իրան Նամե, հ. 42-43, Ե., 2010-2011, էջ 50-51): Շարժվելով աս տրամաբանությամբ՝ այս բարբառախմբի համար «նոր ազարիական» տերմինն է օգտագործում

շրջանում փոխառել է գրաբարի ավելի արխայիկ տարբերակը՝ *ʾyus* ձևով, ըստ որում, բարբառային «*վայրի կատու*» նշանակությամբ:

VARDANIAN AHARON
(YSU)

ARMENIAN INFLUENCE ON THE TALISHI LANGUAGE

1. The linguistic relationship between Talishi and Armenian has not been the subject of systematic research. This paper examines several Talishi-Armenian lexical correspondences. Remarkably, some of these lexemes are not found in other Iranian languages, including those that are particularly close to Talishi.

We have no historical records at our disposal for examining the relations between Armenians and Talishis. Nevertheless, there are a few Armenian villages named *T'ališ*. One of them is located in the Aragatsotn district, Republic of Armenia. It may be identified with the homonymous settlement which is mentioned by Evlia Chelebi, a Turkish traveller of the 17th century. The other one is in the Martakert district, Nagorno-Karabakh Republic and is known since the times of Taleshi Khānat.

2. The ancient Armenians were aware of the land of *T'ališ*. The latter is attested in the Armenian version of *The Alexander Romance* by Pseudo-Callisthenes.

Ew patmeac 'nma, t ē p'axstakan ē i Kasbiakan druns, merj yašxarhn T'ališ, i gawañ Gilanay "And he told him that he had fled to the Caspian Gates, near the land of *T'ališ*, in the region of Gilan".

In this passage, the fragment that follows *i Kasbiakan druns* (= ἐπὶ τῷ Κασπιακῷ πύλῳ), that is *merj yašxarhn T'ališ, i gawañ Gilanay*, is missing in the Greek text and should be regarded as an Armenian addition.

3. Taking into consideration the semantic aspect of the common words (Tal. *kutən*, *kotən* vs. MidArm. *gut'an*, dial. *g'ut'an* / *k'ut'an* 'plough'; Tal. *lard* vs.

նաև տողերիս հեղինակը: Տե՛ս Վարդանյան Ա., «Խալխալի նոր ազարիական բարբառների բառապաշարի որոշ առանձնահատկությունների շուրջ», *Orientalia*, պրակ 15, Ե., 2013, էջ 40:

Arm. dial. **l(e)ard* (cf. Łarabał *la/ārt*, Šamaxi *lert*, etc.) 'coagulated blood' (note Cl. Arm. *leard* 'liver'); Tal. *las* vs. Arm. *lusan* 'lynx'; Tal. *parzən* and Kurd. *parzon* vs. Arm. dial. *parzon* 'filter'; Tal. *puš* vs. Arm. dial. *p'uš* 'thorn, prickle'), we can assume that the relations between the two nations were merely on the simple social level. These words may have been borrowed into the Talishi language through the Caucasian Turkish or Kurdish, but this is possible only in the case the Armenians and the Talishes did not have mutual relation borders. Though these language relations may have resulted from a broader areal interaction, direct contacts between the Talishes and the Armenians cannot be excluded.